Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱՆԻ ՎԻՐԱԲՅԱՆԻ ԵՎ ԼԻԼԻԹ ՍԱՆԱՍԱՐՅԱՆԻ Ք. ԼԻՍԱԲՈՆ (ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ԵՎ Ք. ՄԱԴՐԻԴ (ԻՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ) ԿԱՏԱՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Անուն, ազգանուն.

Անի Վիրաբյան, Լիլիթ Սանասարյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության պետ

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի փորձաքննության և վերլուծությունների վարչության գիտական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Քաղաք Լիսաբոն (Պորտուգալիայի Հանրապետություն)՝ 2025 թվականի ապրիլի 20-ից 23-ը, քաղաք Մադրիդ (Իսպանիայի Թագավորություն)՝ 2025 թվականի ապրիլի 24-ից 26-ը

4. Հրավիրող կողմը.

Իսպանիայի Թագավորության Մադրիդի ինքնավար համալսարան և Պորտուգալիայի Հանրապետության Լիսաբոնի համալսարան

5.Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն Եվրոպական միության «Էրազմուս+» «Կարողությունների զարգացում բարձրագույն կրթության ոլորտում» գործողության «eCAMPUS» ծրագրի ճանաչողական այցին

6. Քննարկված թեմաները.

- կրթության բովանդակության թվայնացման էությունը, անհրաժեշտությունը և կարևորությունը,
- էլեկտրոնային կրթական հարթակների համար նպաստավոր միջավայրի ստեղծումը, էլեկտրոնային կրթական տիրույթում կրթական հաստատությունների համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների իրականացումը,

- կրթական հաստատությունների անձնակազմի տարբեր օղակների վերապատրաստումների, տեխնիկական և մեթոդաբանական հարմարեցումների իրականացումը,
- Իսպանիայի կրթության համակարգը Եվրոպական կրթական տարածքը միանալուց հետո.նոր իրավական շրջանակը, մարտահրավերները, Եվրոպական կրթական տարածքին համապատասխան Իսպանիայի կրթական համակարգում առկա թվային կոմպետենցիաները,
- բարձրագույն կրթության ոլորտում դասավանդման մեթոդաբանության և տեխնոլոգիաների բարելավման խթանումը,
- կորոնավիրուսի համաճարակի արդյունքում բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ձեռք բերված փորձառությունը,
- Իսպանիայի կրթական համակարգի թվային կոմպետենցիաների շրջանակը և դրանց գնահատումը,
- տարածաշրջանային որակի ապահովման գործակալությունների դերը թվային ենթակառուցվածքներում և կոմպետենցիաներում,
- թվային դասավանդման խթանումը թվային հարթակների գործարկման միջոցով,
- թվային հմտությունները Իտալիայի բարձրագույն կրթության համակարգում. հաստատված շրջանակային փաստաթղթերը, այս ուղղությամբ իրականացված նախաձեռնությունները, հավաստագրումը և միկրոորակավորումները,
- հիբրիդ դասավանդման էությունը.խելացի դասասենյակների (Intelligent classrooms) առանձնահատկությունները և առավելությունները,
- հեռավար ուսուցման նորարարության և որակի ապահովումը. գործնական կիրառման ռազմավարություններ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ճանաչողական այցի ընթացքում մասնակցել ենք «Էրազմուս+» «Կարողությունների զարգացում բարձրագույն կրթության ոլորտում» գործողության «eCAMPUS» ծրագրի շրջանակում Լիսաբոնի համալսարանում և Մադրիդի ինքնավար համալսարանում կազմակերպված աշխատաժողովներին: Վերջինիս ընթացքում քննարկվել են թվային կրթության ոլորտում դասավանդման մեթոդաբանությանն և տեխնոլոգիաների բարելավմանն առնչվող հարցերի լայն շրջանակ, մասնավորապես, ներկայացվել են Իսպանիայի և Պորտուգալիայի կրթության համակարգերի առանձնահատկությունները և նոր իրավական շրջանակը Եվրոպական կրթական տարածքին միանալուց հետո,

Եվրոպական կրթական տարածքին համապատասխան Իսպանիայի կրթական համակարգում առկա թվային կոմպետենցիաները,կրթության բովանդակության թվայնացման համար անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների, փորձառության ձեռքբերմանն ուղղված աշխատանքների իրականացումը, հեռավար ուսուցման նորարարության և որակի ապահովումը: Եվրոպական առաջատար համալսարանները, այդ թվում՝ Լիսաբոնի համալսարանը և Մադրիդի ինքնավար համալսարանը կիսվել են հեռավար ուսուցման ոլորտում իրենց փորձառությամբ. ներկայացվել են թվային կրթության գործող էլեկտրոնային հարթակները, թվային կրթության գործնական կիրառման ռազմավարությունները, խելացի դասասենյակների գաղափարը, դրանց առանձնահատկությունները և առավելությունները:

Ճանաչողական այցի ընթացքում հանդիպումներ ենք ունեցել թվայնացման ոլորտում համալսարանական պատասխանատուների, նորարարական լաբորատորիաների ներկայացուցիչների, ինչպես նաև թվայնացման և էլեկտրոնային կրթական հարթակների ու համալսարանական համայնքի առցանց գործարկման պատասխանատուների հետ, ինչպես նաև այցելել ենք կրթության ոլորտում նորարարական լուծումներ իրականացնելու համար նախատեսված ներհամալսարանական լսարաններ, տաղավարներ, ստորաբաժանումներ՝ ծանոթանալու արդեն իսկ կիրառվող տեխնիկական հարմարեցումներին, լուծումներին և գաղափարներին:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այցի ընթացքում պայմանավորվածություններ է ձեռք բերվել, որ «Էրազմուս+» «Կարողությունների զարգացում բարձրագույն կրթության ոլորտում» գործողության «eCAMPUS» ծրագրով նախատեսված հաջորդ այցերի ընթացքում ծրագրի կոնսորցիումի անդամ ԵՄ գործընկերների կողմից կներկայացվի թվային կրթության գործնական կիրառումը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Աշխատաժողովի ընթացքում առաջարկվել է ԵՄ գործընկերների հետ համատեղ շարունակել «Էրազմուս+» «Կարողությունների զարգացում բարձրագույն կրթության ոլորտում» գործողության «eCAMPUS» ծրագրի կոնսորցիումի անդամների միջև համագործակցային աշխատանքների իրականացումը 1-ին աշխատանքային փաթեթի շրջանակում նախատեսված գործողությունների սահուն ընթացքն ապահովելու նպատակով:

30 ապրիլի, 2025 թվական

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՆԻ ՎԻՐԱԲՅԱՆ